

Ամփոփ զեկույց: Հայաստանում նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի հետևանքների հաղթահարմանն ուղղված տնտեսական և սոցիալական միջոցառումների թափանցիկությունը



Ներածություն

Նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի և արցախյան պատերազմի արդյունքում Հայաստանում առաջացած ճգնաժամը մեծ ազդեցություն ունեցան Հայաստանի և տարածաշրջանի վրա: Հայաստանում COVID-19-ի առաջին հաստատված դեպքն արձանագրվեց 2020 թվականի մարտի 1-ին: Հետագայում, 15 օր անց, հանրապետության ամբողջ տարածքում հայտարարվեց արտակարգ դրություն:

2020 թվականի մարտի 16-ին արտակարգ դրության հայտարարմամբ մեկնարկեց COVID-19-ի համավարակի տնտեսական և սոցիալական հետևանքների հաղթահարմանն ուղղված կոնկրետ միջոցառումների ձևակերպման և մշակման գործընթացը: Տաս օր անց՝ մարտի 26-ին ՀՀ կառավարությունը հաստատեց կորոնավիրուսի հետևանքների հակազդման միջոցառումների համապարփակ ծրագիրը, ինչպես նաև այդ ծրագրի շրջանակներում կորոնավիրուսի տնտեսական և սոցիալական հետևանքների հաղթահարման առաջին հինգ միջոցառումները: Ընդհանուր առմամբ, հաստատվեցին 25 այդպիսի միջոցառումներ՝ բոլորը ՀՀ կառավարության որոշումներով: Վերջին՝ 25-րդ որոշումը հաստատվեց 2020 թվականի սեպտեմբերի 22-ին: Հայաստանի կառավարությունն արցախյան վերջին 44-օրյա պատերազմի ժամանակ և դրանից հետո կորոնավիրուսի հետևանքների հակազդման ոչ մի նոր միջոցառում չի ընդունել, ինչպես նաև չի տրամադրել որևէ տեղեկատվություն արդեն ընդունված միջոցառումների մասին:

COVID-19-ի համավարակի տնտեսական և սոցիալական հետևանքների հաղթահարմանն ուղղված միջոցառումների փաթեթի ընդհանուր արժեքը գնահատվում է մոտ 300 միլիոն ԱՄՆ դոլար: ՀՀ Ազգային ժողովի կողմից ավելի ուշ ընդունված «ՀՀ 2020 թվականի մասին պետական բյուջեի մասին օրենքում» փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքը (ընդունվեց 2020 թվականի ապրիլի 29-ին և ուժի մեջ մտավ նույն թվականի մայիսի 8-ին) ուղղված էր վերանայելու 2020 թվականի պետական բյուջեի մասին օրենքով սահմանված որոշ սահմանաչափեր: Դա թույլ տվեց կառավարությանը գերազանցելու իր պահուստային ֆոնդի՝ օրենքով սահմանված մեծությունը, գերազանցելու իր կողմից սահմանված կարգով պետական բյուջեի ծախսերի վերաբաշխման չափի վերին սահմանը, մեծացնելու 2020 թվականի պետական բյուջեի մասին օրենքով սահմանված պակասուրդի (դեֆիցիտի) չափը (մոտավորապես 320 միլիարդ դրամով կամ 660 միլիոն ԱՄՆ դոլարով), ինչպես նաև օգտագործելու եկամտի լրացուցիչ, ներառյալ օտարերկրյա, աղբյուրներ, այդ պակասուրդը ծածկելու համար:

Պատերազմի ավարտից հետո հասարակության ներսում իշխանությունների նկատմամբ վստահությունը սասանվեց և 2021 թվականի հունիսի 20-ին նշանակվեցին արտահերթ խորհրդարանական ընտրություններ: Ընտրությունները տեղի էին ունենում առկա լարվածության ֆոնին, որն առաջացել էր արցախյան 6-շաբաթյա պատերազմում հայկական ուժերի կրած պարտությամբ պայմանավորված՝ ամիսներ տևած ճգնաժամի հետևանքով:

«Հրատապ և արագ արձագանքումը պարտադիր չէ, որ տեղի ունենա ի վնաս հաշվետվողականության»:

Ամփոփ զեկույց:

Հայաստանում նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի հետևանքների հաղթահարմանն ուղղված տնտեսական և սոցիալական միջոցառումների թափանցիկությունը

Նախքան ընտրությունները հրաժարական տված, սակայն իր պարտականությունները ժամանակավորապես կատարող վարչապետ Նիկոլ Փաշինյանի կուսակցությունը հաղթեց այդ ընտրություններում: Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ) Ընտրությունների միջազգային դիտորդական առաքելությունը հայտարարեց, որ ընտրություններն ազատ և արդար էին: ՀՀ Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահ Տիգրան Մուկուչյանը նշեց, որ ընտրություններն «ընդհանուր առմամբ» անցկացվել են ընտրությունների վերաբերյալ ազգային օրենսդրությանը համապատասխան:

Նոր կառավարությունը ձևավորվեց 2021 թվականի օգոստոսին, որը նույն թվականի հոկտեմբերին ԱԺ ներկայացրեց 2022 թվականի պետական բյուջեի նախագիծը: Այն ընդունվեց նույն թվականի դեկտեմբերի 9-ին՝ նախքան նոր բյուջետային տարվա սկիզբը:

Որքանով էին բաց և հաշվետու COVID-19-ի հաղթահարմանն ուղղված միջոցառումները

Համավարակին բաց և հաշվետու կերպով արձագանքելը իշխանությունների համար ոչ միայն իր քաղաքացիների բարեկեցության նկատմամբ իր հանձնառությունը ցույց տալու ձև է, այլ նաև ընդունումն է այն փաստի, որ բաց բյուջեները տալիս են իրական օգուտներ՝ սկսած կոռուպցիոն ռիսկերի նվազեցումից մինչև հանրային քաղաքականության ավելի արդարացի և արդյունավետ արդյունքների ապահովում: Այլ կերպ ասած, կարճ և արագ ճանապարհով գնալը և սահմանափակումներ մտցնելը ոչ անհրաժեշտ են, և ոչ էլ անխուսափելի: Նույնիսկ ամենասարսափելի ճգնաժամերի ժամանակ հաշվետվողականությունը կարող է աշխատել, եթե յուրաքանչյուր ոք անում է իր աշխատանքը բաց և համագործակցային կերպով: Հրատապ և արագ արձագանքումը պարտադիր չէ, որ տեղի ունենա ի վնաս հաշվետվողականության:

Միջազգային բյուջետային գործընկերությունն (ՄԲԳ), աշխատելով 120 երկրներում քաղաքացիական հասարակության իր գործընկերների, ներառյալ «Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն» հասարակական կազմակերպության հետ (որը Թրանսփարենսի Ինթերնեշնլի պաշտոնական ներկայացուցիչն է Հայաստանում), վերլուծել է, թե ինչպես են կառավարություններն իրականացրել COVID-19-ին իրենց նախնական արձագանքումը՝ կիրառելով հարկաբյուջետային քաղաքականության գործիքներ: ՄԲԳ-ի նպատակը ոչ միայն կառավարությունների գործողությունների գնահատելն էր, այլ նաև այն դասերը վեր հանելը, որոնք պետք է քաղեն այդ կառավարությունները՝ ավելի լավ արձագանքելու և՛ դեռևս շարունակվող COVID-19 համավարակին, և՛ ապագայում նման ճգնաժամերին: COVID-19-ի հետևանքով առաջացած արտակարգ իրավիճակներին դիմագրավելու նպատակով մշակված հարկաբյուջետային բնույթի քաղաքական նախաձեռնությունների արտակարգ փաթեթների այս արագ գնահատումը հիմնված է երեք առանցքային հենարանների, այն է, համապատասխան տեղեկատվության հանրային մատչելիության, համարժեք վերահսկողություն ապահովող ընթացակարգերի և քաղաքացիների մասնակցության հնարավորությունների, վրա:

Ամփոփ զեկույց:

Հայաստանում նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի հետևանքների հաղթահարմանն ուղղված տնտեսական և սոցիալական միջոցառումների թափանցիկությունը

COVID-19-ի համավարակի վաղ փուլերում հարկաբյուջետային քաղաքականության հաշվետվողականության մակարդակները

	Երկրների քանակ (120-ից)	Երկրներ
Հական	0	
Համարժեք	4	Ավստրալիա, Նորվեգիա, Պերու, Ֆիլիպիններ
Որոշ չափով	29	Բանգլադեշ, Բրազիլիա, Բուլղարիա, Կանադա, Չիլի, Կոլումբիա, Կոստա Ռիկա, Խորվաթիա, Ֆիջի, Ֆրանսիա, Գերմանիա, Ինդոնեզիա, Իտալիա, Ջամայկա, Ճապոնիա, Դրոգաստան, Մոնղոլիա, Նոր Զելանդիա, Նիգերիա, Պարագվայ, Լեհաստան, Պորտուգալիա, Սիերա Լեոնե, Սլովակիա, Սլովենիա, Հարավային Աֆրիկա, Շվեդիա, Միացյալ Թագավորություն, Միացյալ Նահանգներ
Սահմանափակ	54	Աֆղանստան, Անգոլա, Արգենտինա, Հայաստան, Ադրբեջան, Բոլիվիա, Բոսնիա և Հերցեգովինա, Բոտսվանա, Կամերուն, Չինաստան, Կոտ դ'Իվուար, Չեխիա, Դոմինիկյան Հանրապետություն, Էկվադոր, Էլ Սալվադոր, Վրաստան, Գանա, Գվատեմալա, Հոնդուրաս, Հորդանան, Ղազախստան, Քենիա, Լեսոտո, Լիբերիա, Մակեդոնիա, Մադագասկար, Մալայզիա, Մալի, Մեքսիկա, Մոլդովա, Մոզամբիկ, Նամիբիա, Նեպալ, Նիկարագուա, Նիգեր, Պակիստան, Պապուա Նոր Գվինեա, Ռումինիա, Ռուսաստան, Ռուանդա, Սենեգալ, Սերբիա, Սոմալի, Հարավային Կորեա, Իսպանիա, Շրի Լանկա, Սան Տոմե և Պրինսիպ, Թաիլանդ, Թիմոր-Լեստե, Տոգո, Տրինիդադ և Տոբագո, Ուկրաինա, Վիետնամ, Զամբիա
Նվազագույն	32	Ալբանիա, Ալժիր, Բենին, Բուրկինա Ֆասո, Բուրունդի, Կամբոջա, Չադ, Կոնգոյի Դեմոկրատական Հանրապետություն, Եգիպտոս, Հասարակածային Գվինեա, Էսվատինա, Եթովպիա, Հունգարիա, Հնդկաստան, Իրաք, Լիբանան, Մալավի, Մարոկկո, Մյանմար, Կատար, Սաուդյան Արաբիա, Հարավային Սուդան, Սուդան, Տաիլանդ, Տանզանիա, Գամբիա, Թունիս, Թուրքիա, Վենեսուելա, Եմեն, Զիմբաբվե

Հիմնական բացահայտումները

1. Խթանիչ և արձագանքման միջոցառումների, ընդհանուր առմամբ, սահմանափակ թափանցիկություն

Չնայած COVID-19 կորոնավիրուսի համավարակի տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ հանրորեն բավականին մատչելի և ծավալուն տեղեկատվությանը՝ դրան չհետևեցին այդ միջոցառումների կիրարկման վերաբերյալ զեկույցներ: Հայաստանի կառավարությունն այդ միջոցառումների կիրարկման կամ համավարակի հետ կապված գնումների վերաբերյալ հանրությանը տրամադրեց նվազագույն տեղեկատվություն՝ դժվարացնելով գնահատել, թե արդյոք պետությունը ստացավ արժեք փողի դիմաց բժշկական սարքավորումներ կամ այլ ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելիս:

Կիրարկման վերաբերյալ թափանցիկությունը հնարավորություն կտար հասկանալ, թե ինչպես են իրականացվել միջոցառումները և ինչ արդյունքներ են ստացվել: Վերը նշված միջոցառումների կիրարկման վերաբերյալ հանրային հաշվետվությունների բացակայությունը խոչընդոտում է ճգնաժամին արձագանքելուն ուղղված իշխանությունների ձեռնարկած քայլերի արդյունավետության վերաբերյալ հաշվետվողականությանը: Առկա են հնարավորություններ հետևելու կորոնավիրուսի հետևանքների չեզոքացմանն ուղղված միջոցառումների կատարմանը՝ դրանց վերաբերյալ հաշվետվությունների միջոցով, որոնք կհրապարակվեն այն նույն ֆորմատով, ինչ ամսական կամ եռամսյակային կատարողական զեկույցները:

Ամփոփ զեկույց:

Հայաստանում նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի հետևանքների հաղթահարմանն ուղղված տնտեսական և սոցիալական միջոցառումների թափանցիկությունը

Կիրարկման վերաբերյալ թափանցիկությունը հնարավորություն կտար հասկանալ, թե ինչպես են իրականացվել միջոցառումները և ինչ արդյունքներ են ստացվել: Վերը նշված միջոցառումների կիրարկման վերաբերյալ հանրային հաշվետվությունների բացակայությունը խոչընդոտում է ճշգրտաբան արձագանքելուն ուղղված իշխանությունների ձեռնարկած քայլերի արդյունավետության վերաբերյալ հաշվետվողականությանը: Առկա են հնարավորություններ հետևելու կորոնավիրուսի հետևանքների չեզոքացմանն ուղղված միջոցառումների կատարմանը՝ դրանց վերաբերյալ հաշվետվությունների միջոցով, որոնք կհրապարակվեն այն նույն ֆորմատով, ինչ ամսական կամ եռամսյակային կատարողական զեկույցները:

COVID-19-ի համավարակին հարկաբյուջետային և քաղաքական (policy) արձագանքման թափանցիկության Հայաստանի գնահատականը

Թափանցիկություն	Սահմանափակ
Փաթեթի ներկայացում	Սահմանափակ
Մակրոտնտեսական և բյուջետային ընդհանուր	Սահմանափակ
Հանրային քաղաքականության միջոցառումներ	Համարժեք
Շահառուներ և նրանց աջակցություն տրամադրելը	Սահմանափակ
Ֆինանսավորման աղբյուրներ	Նվազագույն
Արտաբյուջետային ֆոնդեր	Կիրառելի չէ
Փաթեթի կիրարկում	Սահմանափակ
Կատարողականի զեկույց	Սահմանափակ
Արտաբյուջետային ֆոնդեր	Կիրառելի չէ
Գնումներ	Նվազագույն

Չնայած COVID-19-ի համավարակի տնտեսական և սոցիալական հետևանքների հաղթահարմանն ուղղված միջոցառումների բովանդակության վերաբերյալ հանրությանը սկզբում հասանելի բավականին մեծ ծավալի տեղեկատվության, դրան չհետևեց այդ միջոցառումների կիրարկման վերաբերյալ որևէ հաշվետվություն: Հայաստանի կառավարությունը տրամադրեց նվազագույն տեղեկատվություն նաև դրանց առնչվող գնումների վերաբերյալ և դրանով իսկ դժվարացրեց գնահատումն այն բանի, թե արդյոք պետությունը ստանում էր արժեք փողի դիմաց բժշկական սարքավորումների կամ այլ ապրանքների և ծառայությունների գնումների ժամանակ: Բացի այդ, կառավարությունը շատ ժլատ տեղեկատվություն էր տրամադրում պլանավորված և փաստացի ծախսերի և դրանց համադրման, կամ մատակարարների ֆինանսավորման, կամ նրանց գործունեության վերաբերյալ:

2. Քաղաքացիների նվազագույն ներգրավվածություն միջոցառումների ձևակերպման և կիրարկման գործընթացներում

COVID համավարակի հարկաբյուջետային և քաղաքական (policy) արձագանքման, այն է, համավարակի տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացմանն ուղղված միջոցառումների մշակման և կիրարկման գործընթացներում բացակայել է քաղաքացիների մասնակցությունը, դրանով իսկ բացառելով համավարակի ժամանակ առաջնայնությունների սահմանման հանրության ձայնը մեջ և զրկելով կառավարություններին՝ իրենց ընդունած որոշումներում հանրության իմաստավոր ներդրումից:

Ամփոփ զեկույց:

Հայաստանում նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի հետևանքների հաղթահարմանն ուղղված տնտեսական և սոցիալական միջոցառումների թափանցիկությունը

COVID-19-ի համավարակին հարկաբյուջետային և քաղաքական (policy) արձագանքման մասնակցայնության Հայաստանի գնահատականը

Մասնակցայնություն

Նվազագույն

Չանրային մասնակցություն

Նվազագույն

3. Նվազագույն վերահսկողություն օրենսդիր մարմնի և հաշվեքննիչ պալատի կողմից

Սույն ուսումնասիրությունն ընդգրկող ժամանակահատվածում ՀՀ օրենսդիր մարմնի՝ ՀՀ Ազգային ժողովի (ԱԺ) և ՀՀ բարձրագույն հաշվեքննիչ մարմին հանդիսացող ՀՀ Հաշվեքննիչ պալատի (ՀՊ) կողմից համավարակի տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացմանն ուղղված միջոցառումների նկատմամբ վերահսկողությունը նվազագույն մակարդակի էր:

Պետության՝ կորոնավիրուսի չեզոքացմանն ուղղված արտակարգ փաթեթը, որն ընդգրկեց կորոնավիրուսի տնտեսական և սոցիալական հետևանքների չեզոքացման նպատակով կառավարության կողմից ընդունված 25 լոկալ որոշումները, խորհրդարանում ո՛չ քննարկվեց կամ ուսումնասիրվեց, և ո՛չ էլ այդ փաթեթի կիրարկման նկատմամբ սահմանվեց խորհրդարանական վերահսկողություն: Ընդհանուր առմամբ, ՀՀ ԱԺ-ն սահմանափակվելով միայն ՀՀ-ում արտակարգ դրություն հայտարարելու մասին 2020 թվականի մարտի 16-ին որոշումն ընդունելով, իրեն դուրս թողեց վերը նշված փաթեթի քննարկումից և դրա նկատմամբ վերահսկողությունից: Միևնույն ժամանակ ԱԺ որոշ պատգամավորներ, հիմնականում ընդդիմադիր խմբակցություններից, օգտագործելով կառավարությանը գրավոր կամ բանավոր հարցումներ ներկայացնելու իրենց իրավունքը, կոչ էին անում մշտադիտարկման ենթարկել այդ փաթեթի կիրարկումը: Պատգամավորները կարող էին նաև մշտադիտարկել այդ փաթեթի կիրարկումը՝ վերլուծելով պետական բյուջեի կատարման տարեկան և եռամսյակային հաշվետվությունները, չնայած նրան, որ այս տեսակի մոնիտորինգ իրականացնելը բարդ է, քանի որ նշված հաշվետվություններում կոնկրետացված չէ այդ արտակարգ փաթեթի կատարողականը (կատարողական հաշվետվությունները ցույց են տալիս միայն բյուջետային ծրագրերի և նրանց միջոցառումների կատարողականը, իսկ արտակարգ փաթեթում ներառված միջոցառումները չեն ձևակերպված որպես բյուջետային կոնկրետ ծրագրեր կամ միջոցառումներ):

«Համավարակին բաց և հաշվետու կերպով արձագանքելը իշխանությունների համար ոչ միայն իր քաղաքացիների բարեկեցության նկատմամբ իր հանձնառությունը ցույց տալու ձև է, այլ նաև ընդունումն է այն փաստի, որ բաց բյուջեները տալիս են իրական օգուտներ»:

Ամփոփ գեկույց:

Հայաստանում նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի հետևանքների հաղթահարմանն ուղղված տնտեսական և սոցիալական միջոցառումների թափանցիկությունը

Արտակարգ փաթեթում ներառված միջոցառումների՝ բյուջետային կոնկրետ ծրագրեր կամ միջոցառումներ չհանդիսանալը թույլ չտվեց նաև Հաշվեքննիչ պալատին դրանք առանձին հաշվեքննության ենթարկել: Այդ միջոցառումների հաշվեքննության մասին տեղեկատվությունը կարելի է քաղել համապատասխան պետական հաստատությունների, առաջին հերթին, Առողջապահության նախարարության, Ֆինանսների նախարարության, Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության և Վարչապետի աշխատակազմի հաշվեքննության արդյունքներից:

Ազգային ժողովի և Հաշվեքննիչ պալատի կողմից պրոակտիվ քայլերի բացակայությունը կարելի է հիմնականում բացատրել իշխանության գործադիր ճյուղի կողմից իշխանության մյուս ճյուղերի և անկախ մարմինների նկատմամբ կոշտ գերակայության երկարատև պատմությամբ:

ԱԺ-ն և ՀՊ-ն հաշվետվողականություն ապահովող երկու կարևոր հաստատություններն են և կարող են էլ ավելի ուժեղացնել հաշվետվողականության հարցում իրենց դերը՝ մեծացնելով իրենց համար հասանելի տեղեկատվության ծավալը և ներգրավելով հանրությանը միջոցառումների կիրարկման մշտադիտարկման մեջ:

ԱԺ-ում ոչ քննարկվեց և ոչ էլ գնահատվեց կառավարության 25 լոկալ որոշումներով ձևավորված համավարակի հետևանքների չեզոքացմանն ուղղված արտակարգ փաթեթը: Ընդհանուր առմամբ, հանրապետությունում արտակարգ դրություն հայտարարելը (2020թ. մարտի 16-ին) և նույն թվականի ապրիլի 29-ին 2020թ. պետական բյուջեի մասին օրենքում կառավարության կողմից առաջարկած փոփոխությունը և լրացումները հաստատելը (որով կառավարությանը թույլատրվեց գերազանցել այդ տարվա պետական բյուջեի պակասուրդը, կառավարության որոշումների հիման վրա բյուջետային վերաբաշխումներ և կառավարության պահուստային ֆոնդից հատկացումներ կատարելիս գերազանցել «ՀՀ բյուջետային համակարգի մասին» օրենքով սահմանված սահմանաչափերը) չի նշանակում, որ ԱԺ-ն ներգրավված էր այդ փաթեթի գնահատման և վերահսկողության գործընթացներում:

Առաջարկություններ

Թափանցիկության, մասնակցայնության և վերահսկողության ապահովումը ներկայումս և երկարաժամկետ կտրվածքով վճռորոշ է և՛ հաշվետվողականության, և՛ թանկարժեք միջոցների արդյունավետ և արդարացի օգտագործման տեսանկյուններից: COVID-19-ի հետևանքների չեզոքացմանն ուղղված հարկաբյուջետային և քաղաքական արձագանքման մեջ հաշվետվողականության հարցերում առկա բացերին անդրադառնալն այսօրվա հրամայականն է և՛ ճգնաժամի ժամանակ, և՛ դրանից հետո: Ելնելով դրանից՝ դիմում ենք Հայաստանի կառավարությանն աշխատել պետական և ոչ պետական հաստատությունների հետ և ձեռնարկել հետևյալ քայլերը.

1. Ներգրավել քաղաքացիներին արտակարգ իրավիճակներին արձագանքման միջոցառումների մշակման մեջ

Լավ քաղաքականության մշակումն ապահովվում է շնորհիվ նրա, որ կառավարությունները հավաքագրում են արտակարգ իրավիճակներում քաղաքականության վերաբերյալ հանրության գնահատականները և օգտագործում են հետադարձ կապի այդպիսի մեխանիզմները՝ բարելավելու համար այդպիսի իրավիճակներին քաղաքական արձագանքման հետագա գործողությունները: Կառավարության այդպիսի ջանքերը կարող են երկար ճանապարհ անցնել՝ իրենց նկատմամբ վստահություն ձևավորելու համար, որն անհրաժեշտ է, որպեսզի քաղաքացիները սկսեն հետևել հանրային շահերի վրա հիմնված նորմերին, ինչպիսիք են, օրինակ, դիմակի կրումը կամ պատվաստումը:

- Աջակցության և արձագանքման փաթեթների ձևակերպման և կիրարկման վերաբերյալ որոշումների կայացնելիս հաշվի առնել նաև հանրության ներդրումը, մանավանդ նրանց ներդրումը, որոնց վրա առավել ուժեղ է ազդել ճգնաժամը:
- Ստեղծել փաթեթների հիմնական շահառուների հետ հետադարձ կապի մեխանիզմներ՝ գնահատելու համար այդ փաթեթների արդյունավետությունը և դրանցից շահառուների ստացած օգուտը:
- Ներառել քաղաքացիների արձագանքները՝ արտակարգ իրավիճակներին քաղաքական արձագանքման միջոցառումների մշակման և ձևավորման գործընթացներում:

2. Պարտավորվել տեղեկացնել քաղաքացիներին արտակարգ իրավիճակներին արձագանքման միջոցառումներին հատկացված միջոցների օգտագործման մասին և այդպիսի արտակարգ իրավիճակներում ժամանակին և օգտագործողների համար հարմար տեսքով (user-friendly) հրապարակել համավարակին առնչվող գնումների պայմանագրերը

- Հրապարակել արտակարգ փաթեթներում ներառված միջոցառումների կիրարկման վերաբերյալ առաջընթացի ամսական զեկույցներ, որոնցում ներառված կլինեն բյուջեի կատարողականի և միջոցառումների իրականացման վերաբերյալ տվյալներ և դրանց վերլուծությունը, ընդ որում կլինեն տարանջատված տվյալներ ըստ մարզինալացված խմբերի, ներառյալ կանանց և աղջիկների, վրա ազդեցության:
- Բացահայտել, որտեղ հնարավոր է բաց տվյալները ֆորմատով, գնումների պայմանագրերի և ընկերությունների իրական սեփականատերերի հետ կապված բոլոր մանրամասները:

Ամփոփ զեկույց:

Հայաստանում նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի հետևանքների հաղթահարմանն ուղղված տնտեսական և սոցիալական միջոցառումների թափանցիկությունը

3. Ուժեղացնել արտակարգ իրավիճակներին արձագանքման միջոցառումների վրա կատարվող ծախսերի նկատմամբ օրենսդիրի վերահսկողությունը և դրանց հաշվեքննությունը

- Լիազորել Հաշվեքննիչ պալատին՝ իրականացնելու արտակարգ ծախսային ծրագրերի արագացված հաշվեքննություն և երաշխավորել, որ կառավարությունը միջոցներ կձեռնարկի շտկելու այն թերությունները, որոնք վեր են հանվել հաշվեքննության արդյունքում:
- Վերականգնել օրենսդիր մարմնի՝ որպես հանրային քսակի պահապանի դերը, ներառյալ ծախսերի հաստատողի, հանրության և շահեր հետապնդող խմբերի հետ խորհրդակցողի, հանրային քաղաքականության կիրարկումը մշտադիտարկողի և հաշվեքննության արդյունքում ի հայտ եկած բացահայտումներին հետևողի դերերը:
- Երաշխավորել, որ հաշվեքննության արդյունքում ի հայտ եկած բացահայտումներից բխող քայլերն արագ կերպով կյանքի են կոչվում և բազմակողմանի հաշվեքննության արդյունքներից բխող քայլերն արդյունավետ կերպով կյանքի են կոչվում նաև արտակարգ իրավիճակների վերացումից հետո:

4. Սահմանել և կատարելագործել թափանցիկության և հաշվետվողականության չափանիշներն արտակարգ իրավիճակների, ներառյալ պատերազմական, պայմաններում

- Մտցնել և/կամ վերլուծել ու վերանայել իրավական և կարգավորիչ շրջանակը՝ հստակեցնելու համար ճշմարտության ժամանակ սահմանվելիք դերերը, պարտականությունները և մոտեցումները, օրինակ, միջոցների կառավարման, գնումների, վերահսկողության և մասնակցության ոլորտներում:

Չնայած այն բանին, որ այն բանին, որ COVID-19 համավարակը առողջապահական մեկանգամյա գլոբալ ճգնաժամ է, պետությունները ժամանակ առ ժամանակ դիմագրավում են նաև այլ ճգնաժամեր: Դրանք կարող են լինել բախումների տեսքով: Թափանցիկության և հաշվետվողականության չափանիշներին պետք է հետևել նույնիսկ ճգնաժամերի ժամանակ:

Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոնի առաքելությունն է խթանել լավ կառավարումը Հայաստանում՝ նվազեցնելու կոռուպցիան և ամրապնդելով ժողովրդավարությունը:
Հայաստան, Սարյան 12, 5-րդ հարկ, Երևան 0002
Հեռ.՝ (+374 10) 569589, 569689
փոստ՝ info@transparency.am

Միջազգային բյուջետային գործընկերությունը գլոբալ համագործակցում է բյուջեի վերլուծաբանների, համայնքային կազմակերպիչների և պաշտպանների հետ, ովքեր աշխատում են ամբողջ աշխարհում՝ մարդկանց համար աշխատող հանրային բյուջետային համակարգերը զարգացնելու համար:
750 First Street NE, Suite 700, Washington, D.C. 20002 թ.
Հեռ./Ֆաքս՝ +1 202 683 7171
info@internationalbudget.org

Ամփոփ զեկուլյց:

Հայաստանում նոր կորոնավիրուսի (COVID-19) համավարակի հետևանքների հաղթահարմանն ուղղված տնտեսական և սոցիալական միջոցառումների թափանցիկությունը